

2438



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիոյան

«03» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 050 - 25

Նախաձեռնող՝

«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ

ք. Մասիս Երևանյան փ. / փ. 3ա

Գործունեությունը՝

Սևջրի ավազի հանքավայրի 2-րդ տեղամասից
օգտակար հանածոյի արդյունահանում
Արարարի մարզ, Մասիս համայնք

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 050 - 25

«03» Մարտի 2025թ.

Սևջրի ավազի հանքավայրի 2-րդ տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք, Նորամարգ բնակավայր

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի վարչական տարածքում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 2-րդ կետի «թ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության հաշվետվության կազման համար հիմք են հանդիսացել՝ հանքավայրի 1-ին տեղամասի հաստատված պաշարները՝ ՀՀ ՏԿԵ նախարարի 13.02.2024թ-ի թիվ 257-Ա հրամանով, որում ընդգրկված է 2-րդ տեղամասը: Հայցվող տարածքը վարչատարածքային բաժանման տեսակետից ներառված է Մասիս համայնքում: Տեղամասի 03-068-0301-0030 և 03-068-0301-0021 կադաստրային ծածկագրով հողամասերը հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքեր, իսկ 03-068-0301-0025 կադաստրային ծածկագրով հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության, հողատեսքը՝ վարելահող:

Նկարագրական մաս. Սևջրի ավազների հանքավայրի 2-րդ տեղամասը գտնվում է Արարատի մարզում՝ Արտաշատի և Մասիսի տարածաշրջանների միջև, Նորամարգ գյուղից մոտ 2.0կմ հյուսիս-արևմուտք, Հրազդան գետի ձախափնյա մասում և զբաղեցնում է ընդհանուր 19.3 հա տարածք:

Տեղանքը ազատ է կառույցներից և գյուղատնտեսական նպատակների համար չի



օգտագործվում: Տեղամասի մոտակա բնակավայրերն են Հովտաշեն, Նորամարգ,
Մխչյան, Արաքսավան գյուղերն ու Մասիս քաղաքը:
Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները հնարավորություն են տալիս
հանքավայրը մշակել բաց աշխատանքներով:

- բացահանքի եզրագծում օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարները՝
936.1հազ.մ³
 - օգտակար հանածոյի կորզվող պաշարները՝ 861648.0մ³:
 - մակաբացման ապարների ծավալը՝ 266.4հազ. մ³:
- Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը.
- առավելագույն երկարությունը – 743.0մ;
 - առավելագույն լայնությունը – 435.0մ;
 - մշակման միջին խորությունը – 6.8մ;
 - օտարման տարածքը – 19.3հա:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կազմում է՝
- 46805.0մ³ ըստ ավազի մարվող զանգվածի,
- 43083.0մ³ ըստ ավազի արդյունահանվող զանգված:

Բացահանքում լեռնային աշխատանքները կատարվելու են ամենամյա
աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը 1 տարվա համար
ընդունվում է 260օր, օրական մեկ՝ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:
Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

Սևջրի ավազի հանքավայրի 2-րդ տեղամասի հայցվող բացահանքի տարածքը
սահմանափակվում է ArmWGS-84 համակարգի հետևյալ կոորդինատներով.

h	X	Y
1	4434404.92	8449895.17
2	4434439.30	8449893.26
3	4434485.81	8449899.93
4	4434530.06	8449921.76
5	4434567.84	8449945.98
6	4434588.21	8449981.03
7	4434621.17	8450099.24
8	4434599.06	8450221.40
9	4434564.39	8450300.42
10	4434530.80	8450356.35
11	4434499.77	8450390.70
12	4434489.19	8450424.11
13	4434500.94	8450483.14
14	4434573.14	8450529.88



h	X	Y
15	4434576.88	8450560.11
16	4434537.56	8450631.62
17	4434477.49	8450638.30
18	4434414.00	8450636.00
19	4434380.39	8450637.63
20	4434346.79	8450627.64
21	4434321.97	8450605.67
22	4434307.85	8450481.20
23	4434305.74	8450414.23
24	4434291.77	8450384.00
25	4434235.40	8450340.97
26	4434201.34	8450326.75
27	4434161.71	8450333.71
28	4434092.93	8450369.01
29	4434021.27	8450444.68
30	4433996.97	8450440.64
31	4433996.97	8450424.30
32	4434058.52	8450309.05
33	4434124.61	8450190.58
34	4434191.94	8450252.01
35	4434240.99	8450279.61
36	4434412.08	8450171.73
37	4434412.08	8450144.92
38	4434325.67	8450059.51
39	4434399.20	8450034.12

Օգտակար հանքաշերտը ունի համարյա հորիզոնական տեղադրում և կայուն հզորություն, հանքաշերտի բացումը կատարվում է բացահանքային դաշտի արևմտյան, հյուսիս-արևմտյան մասից ընդլայնական կտրող խրամի անցումով:



Կտրող խրամի լայնությունը հիմքի մասում ընդունված է 2.0մ, միջին խորությունը – 6.8մ: Կողի թեքման անկյունը ընդունված է ոչ աշխատանքային՝ 400, աշխատանքային՝ 500:

Կտրող խրամի անցումը կատարվում է 1.0մ³ շերտի տարողությամբ CAT մակնիշի էքսկավատորով:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազի արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ նախապատրաստական աշխատանքներ՝

1. Մոտեցող ավտոճանապարհի կառուցում և կարգաբերում -520.0մ, 130.0մ³,
2. Դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում՝ բացահանքի հարավային մասից - 150մ (50մ³)

Արդյունաբերական հրապարակի կարգաբերում- 220մ²:

Բացահանքից օգտակար հանածոյի տեղափոխումը կատարվելու է սպառողների ավտոինքնաթափերով, որոնց համար ավտոինքնաթափերի անհրաժեշտ քանակի հաշվարկ չի կատարվում:

Հայցվող տեղամասից շուրջ 40մ հեռավորության վրա հոսում է Հրազդան գետը, հանքի տարածքին հարում են գործող ջրատար և գերեզմանատուն: Հանքավայրի տարածքի որոշ կոորդինատներ համընկնում են Հրազդան գետի Էկոտոնի տարածքի հետ և նպատակահարմար է գտնվել գետի էկոլոգիական, հանքավայրի շահագործման անվտանգային նկատառումներից ելնելով և ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ սահմանված չափանիշները հաշվի առնելով գետից հեռավորությունը պահպանել առնվազն 20մ:

Հանքավայրին սահմանակից 03-068-0301-055 ծածկագրով համայնքային գերեզմանոցը (Կառավարության որոշմամբ հաստատված հատուկ պահպանվող հողամասերի ցանկում գտնվող) Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանի համաձայն համարվում է V դասի օբյեկտ և սանիտարապաշտպանիչ նորմը սահմանվում է 50մ:

Հանքի տարածքին հարակից գործող ոռոգման ջրատարի հորիզոնների աղտոտման վտանգից ելնելով արդյունահանումն իրականացվելու է առնվազն 20մ հեռավորությունն ապահովելով:

Համապատասխան սանիտարական գոտիներն ապահովելու նպատակով պայմանականորեն հանքի տարածքից արդյունահանումը տարանջատվել է 2 փուլերի: 1-ին փուլում արդյունահանումն իրականացվելու է այն տարածքներից, որոնք չեն մտնում վերը նշված սանիտարական գոտիների տարածքների մեջ և արդյունահանվելու է 650800.0մ³ օգտակար հանածո, 2-րդ փուլում՝ 210848.0մ³, ընդամենը կարդյունահանվի 861648.0մ³: Մակաբացման ապարների ծավալը կազմելու է 1-ին փուլում՝ 210450.0մ³, այն թվում՝ հողաբուսական շերտը՝ 19825.0մ³,



1-ին փուլի գործողության ժամկետը տևելու է 15.1 տարի, իսկ 2-րդ փուլինը համապատասխան ՇՄԱԳ փորձաքննություն անցկացնելուց և նախագիծը վերանայելուց հետո 4.9 տարի: Աշխատանքների նման կազմակերպման պայմաններում գետի և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը կբացատրվի:

Շահագործման 1-ին տարում առաջացող մակաբացման ապարները՝ 13318.0մ³ ծավալով, այդ թվում հողաբուսական շերտը՝ 880.0մ³ ծավալով և օգտակար հանածոն աղտոտումից զերծ պահելու նպատակով մակաբացման ապարների հետ հեռացվող աղտոտված օգտակար հանածոն՝ 943.0մ³ ծավալով և 14261.0մ³ մակաբաման ապարը, հանվելու և կուտակվելու է աշխատանքային հրապարակից 15-20մ հեռավորության վրա՝ հողաբուսական շերտը կկուտակվի առանձին: Այնուհետև կուտակված զանգվածը էքսկավատորի և ավտոինքնաթափի միջոցով կբարձրվի և կտեղափոխվի բացահանքի տարածքի հյուսիսային մասում կազմակերպվող ներքին լցակույտ: Շահագործման երկրորդ տարվանից սկսած մինչև շահագործման աշխատանքների ավարտը, երբ բացահանքում ստեղծվում են շահագործումից ազատ տարածքներ, մակաբացման ապարները սկսում են տեղափոխվել այդ տարածքներ և շահագործման աշխատանքներին զուգահեռ, փոխվում բացահանքի հատակում՝ նախ մակաբացման ապարները, հետո՝ հողաբուսական շերտը: 1-ին տարվա մակաբացման ապարների ներքին լցակույտի զբաղեցրած մակերեսը կազմում է շուրջ 0.3հա, բարձրությունը՝ 5մ, հողաբուսական շերտի լցակույտի մակերեսը՝ 0.02հա, բարձրությունը՝ 5մ: 1-ին փուլի բացահանքի եզրագծի կորոդինատները հետևյալն են՝

1. Y = 8450208.127 X = 4434143.842
2. Y = 8450252.010 X = 4434191.940
3. Y = 8450279.602 X = 4434240.976
4. Y = 8450171.730 X = 4434412.080
5. Y = 8450144.920 X = 4434412.080
6. Y = 8450098.534 X = 4434365.151
7. Y = 8450085.461 X = 4434400.000
8. Y = 8450068.466 X = 4434417.321
9. Y = 8450000.000 X = 4434450.605
10. Y = 8449912.202 X = 4434453.452
11. Y = 8449912.160 X = 4434484.834
12. Y = 8449947.833 X = 4434549.608
13. Y = 8450079.543 X = 4434590.333
14. Y = 8450129.424 X = 4434597.232
15. Y = 8450276.308 X = 4434546.230
16. Y = 8450375.427 X = 4434473.153



17. Y =8450422.399 X =4434458.258
18. Y =8450502.021 X =4434474.115
19. Y =8450545.392 X =4434545.205
20. Y =8450550.424 X =4434564.195
21. Y =8450557.849 X =4434565.113
22. X=8450604.501 X =4434523.263
23. Y =8450609.307 X =4434498.877
24. Y =8450606.007 X =4434412.140
25. Y =8450609.269 X =4434393.535
26. Y =8450600.000 X =4434360.830
27. Y =8450586.799 X =4434345.914
28. Y =8450570.237 X =4434337.056
29. Y =8450537.041 X =4434332.996
30. Y =8450407.287 X =4434335.564
31. Y =8450366.962 X =4434317.036
32. Y =8450315.405 X =4434251.895
33. Y =8450296.577 X =4434206.962
34. Y =8450305.181 X =4434152.551
35. Y =8450347.096 X =4434077.378
36. X=8450374.467 X =4434047.665

Հանքավայրի շահագործման արդյունքում կեղտաջրերի արտահոսքեր չեն լինելու, ինչը իր հերթին բացառում է գետի աղտոտումը: Հաշվի առնելով, որ ստորերկրյա ջրերը ունեն բարձր մակարդակ, և բացահանքի շահագործման ընթացքում հնարավոր է դրանց ինֆիլտրացիան, որպես բացահանք ներթափանցող ստորերկրյա ջրերի հեռացման միջոց նախատեսվում է կառուցել ջրհեռացնող խրամ, որը հնարավորություն կտա բացահանքի շահագործված տարածքներից հեռացնել կուտակվող ջուրը, թույլ չտալով հնարավոր ճահճացումը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- լեռնակապիտալ աշխատանքների, արդյունահանման աշխատանքների ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան անօրգանական փոշու արտանետման հետ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների առաջացման և կառավարման հետ

Բացահանքի տարածքում հայտնաբերվել են մանր կրծողներ և թռչուններ, միջատներից հայտնաբերվել են ուղղաթևավորների մի քանի տեսակներ, թաղանթաթևավորներ, թեղուկաթևավորներ, հազվադեպ՝ մրջնաբներ:



-թռչուններից դիտարկվել են կաշաղակ և տնային ճնճուկը, սողուններից՝ ճարպիկ մողես, մեծ քանակությամբ դաշտամուկ: Խոշոր կաթնասուններ չեն արձանագրվել:

Տարածքը ուսումնասիրվել է երթուղիներով՝ ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ հայտնաբերելու նպատակով, տարածաշրջանում հանդիպող տեսակներից հայցվող տարածքում՝ Մասիս գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 2կմ հեռավորության վրա չեն արձանագրվել:

Բացահանքում աշխատող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև բացահանքի սահմաններում՝ կապված ավազի տեղափոխման գործընթացի հետ:

Կանխարգելող միջոցառումներով նախատեսվում են՝ սարքավորումների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, զտիչների տեղադրում արտանետման խողովակների վրա: Աշխատանքային հրապարակների և ճանապարհների ոռոգում ջրցան մեքենայով, չոր եղանակին՝ օրական 3 անգամ:

Բացահանքի տարածքում պատմամշակութային արժեք ունեցող հնագիտական կոթողներ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների /մթնոլորտային օդ, մակերևութային ջուր, հող, վայրի բնություն և կենսամիջավայր/ իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 250.0 հազ.դրամ:

Պարճառաքանական մաս. Հաշվետվության փորձաքննության շրջանակներում կատարվել են գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ և մոնիթորինգ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ:

Վերջնական ռեկուլտիվացիոն աշխատանքները կիրականացվեն հանքավայրի շահագործման ավարտին: Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում մակաբացման ապարները կփոփեն բացահանքի հատակում, կհարթեցվեն, իսկ հողաբուսական շերտի ապարները կփոփեն վերջում:

Աշխատանքները կատարվելու են էքսկավատոր-ավտոինքնաթափ-բուլդոզեր լեռնատրանսպորտային համալիրով: Վերջնական ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը կազմելու է 19.32հա:

Եզրափակիչ մաս. Հանրային լուսմների ծանուցումն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մասիս համայնքի Նորամարգ բնակավայրի



վարչական ղեկավարի նստավայրում: Հանրային լուսմների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արարատի մարզպետարանը, Մասիս համայնքը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Փորձաքննության գործընթացում հանքավայրի արդյունահանումը տարանջատվել է պայմանականորեն երկու փուլերի, հաշվի առնելով Հրազդան գետի և ջրատարի հեռավորությունը բացահանքի տարածքից, գերեզմանատան առկայությունը բացահանքի հարևանությամբ: Նշված գործոնների սանիտարապաշտպանիչ գոտիները ապահովելու համար արդյունահանումն իրականացվելու է նախնական 1 փուլով: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում հանքավայրի 1-ին փուլի արդյունահանման դեպքում:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Իրականացնել մթնոլորտային օդի պահպանության արտադրական հսկողություն օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում՝ արդյունահանման աշխատանքների և արտանետումների նվազեցման միջոցառումներով:
- Արդյունահանումն իրականացնել բացառապես 1-ին փուլով սահմանված տարածքում: 2-րդ փուլի արդյունահանման աշխատանքային նախագիծը ներկայացնել լրացուցիչ շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության՝ 1-ին փուլի ավարտին մոտ:
- 1-ին փուլի հանքավայրի ռեկուլտիվացման աշխատանքները իրականացնել անկախ 2-րդ փուլի արդյունահանման հնարավորությունից:
- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ. -ի N 191-Ն որոշման համաձայն:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական,



գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՎԻ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սևջրի ավազի հանքավայրի 2-րդ տեղամասից օգտակար հանածոյի արդյունահանման 1-ին փուլի աշխատանքների, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան